# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք, Հեռ 0256 6 21 67
Էլ. Փոստ gyulagarak.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 179

« 14 » հունիսի 2019թ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում շտաբային ուսումնավարժության անցկացման մասին

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ հուլիսի 2-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ռաֆիկ Վարդանյանին :

Շտաբը կազմավորել համայնքի ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, տրանսպորտային, ինժեներական, բույսերի և կենդանիների պաշտպանության, բժշկական, հասարակական կարգի պահպանման ծառայություններին:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին.

- մշակել և մինչև հունիսի 25-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.
- ուսումնասիրել և ճշգրտել համայնքի «ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.
- համայնքային ծառայությունների ու կազմավորումների պատասխանատուների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- նախապատրաստել ղեկավարման կետը.
- իրականացնել բնակչության ուսուցում՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում վարվելակերպի կանոնների մասին.
- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև հունիսի 28-ը:

4. Համայնքային ծառայությունների պատասխանատուներին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների կանոնադրություններն ու խնդիրները:

2) կապի և ազդարարման պատասխանատու Սուսաննա Սարգսյանին՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու կազմավորումների հետ:

3) տրանսպորտային ծառայության պատասխանատու Խալաթ Գևորգյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ անկված խոզերին տեղափոխելու նպատակով.

4) ինժեներական ծառայության պատասխանատու Արեն Ֆրանգյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա ինժեներական միջոցները, անկված խոզերին թաղելու նպատակով.

5) բժշկական ծառայության պատասխանատու Արմինե Ղարաջյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պատասխանատու Յուլակ Սոֆյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրները՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

7) հասարակական կարգի պահպանման ծառայության պատասխանատու Հերբերտ Մաթևոսյանին՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

5. Ուսումնավարժության ղեկավարումն իրականացվելու է համայնքի կառավարման կետից:

6. Ուսումնավարժության անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 180

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 20.12. 2002թ. թիվ 610603 վկայականը, ղեկավարվելով՝ << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ.թիվ 2387 որոշմամբ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի բնակելի կառուցապատման հողամասին իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ փողոց 25-րդ, թիվ 25:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ.
հունիսի 14

գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 181

### 06-013-0003-0011 ԾԱԾԿԱԳՐԻ 0.0525 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, և << Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 10.06.2019թ.-ի թիվ 42 որոշումը, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 06.10.2005թ. Թիվ 1940-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով և հիմք ընդունելով Քրիստինե Գուրա Վյաչիսլավի դիմումը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

06-013-0003-0011 ծածկագրի 0,525 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողից, փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուղագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուղագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 182

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 29 . 09 . 2017թ . թիվ N 29092017-06-0013 վկայականը,<<ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ>> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյուղագարակ համայնքի Պուշկինո գյուղի 06-093-0012-0024 ծածկագրի 0, 08496 հա բնակելի կառուցապատման հողամասի հասցեն թողնել նույնը/ Գյուղագարակ համայնք գ. Պուշկինո 2-րդ փողոց թիվ 99/ իսկ առանձնացրած 0, 04 հա հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուղագարակ համայնք, գ. Պուշկինո 2-րդ փողոց, թիվ 99/1:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2019թ.
հունիսի 18
գ.Գյուղագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 183

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 23.06.2008թ. թիվ 2514528 վկայականը, ղեկավարվելով՝ « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի 06-027-035-007 ծածկագրի բնակավայրի առևտրի օբյեկտների սպասարկման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գարգառ կենտրոնական փողոց 68։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18» Հունիսի 2019 թվականի N 184

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի >> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի 06-013-0002-0003 ծածկագրի 0.4608 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Ամրակից Կենտրոնական փողոց, թիվ 5 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 185

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի 06-013-0003-0011 ծածկագրի 0.1463 հա բնակելի կառուցապատման հողամասի հասցեն թողնել անփոփոխ/ Կենտրոնական փողոց թիվ 23/, իսկ 06-013-0003-0011 ծածկագրի 0.0525 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Ամրակից կենտրոնական փողոց, թիվ 23/1:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
<<, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 186

## 06-057-0041-0014 ԾԱԾԿԱԳՐԻ 0.00489 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 43-րդ հոդվածով, և << կառավարության 09.06.2005թ. թիվ 839- Ն որոշմամբ և << Գագիկ Մեսրոպյան Վլադիմիր>>-ի ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում << հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

փոփոխել 06-057-0041-0014 ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության 0,00489 հա հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 187

## 06-057-0011-0005 ԾԱԾԿԱԳՐԻ 0.041681 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, և ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 839- Ն որոշմամբ և << Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

փոփոխել 06-057-0011-0005 ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության 0,041681 հա հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 188

## 06-057-0011-0005 ԾԱԾԿԱԳՐԻ 0.02463 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, և ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 839- Ն որոշմամբ և << Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Փոփոխել 06-057-0011-0005 ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի գործառնական նշանակության 0,02463 հա հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 189

### ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ.-ի թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով Ա/Զօրենքի 43-րդ հոդվածով, և ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 839- Ն որոշմամբ և << Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ-ի «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ»-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը և Սամվել Մարիկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել 06-029-0062-0021 և 06-029-0062-0022 ծածկագրերի գծային չափերը՝ ըստ Ա/Ձ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը:

Հաստատել, որ տվյալ հողակտորում առկա է 138.6 ք.մ. արտաքին չափերով 2014 թ.-ին ինքնակամ կառուցված անասնագոմ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20» Հունիսի 2019 թվականի N 190

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Արտյոմ Սաքանյան >> ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0062-0021 և 06-029-0062-0022 ծածկագրերի 0.12 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 2-րդ փողոց, թիվ 8 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019 թվականի N 191

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով Հայկ Եսայանի կողմից ներկայացված դիմումը, որոշում եմ.

1.«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ին տալ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում ստորգետնյա մալուխատարի կառուցման, դիտահորերի և հենասյուների տեղադրման համար շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ.
հունիսի 20

գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 192

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 05 նոյեմբերի 2004թ. թիվ N 1243679 վկայականը՝ << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0058-0015 ծածկագրերի 0.0634 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Կուրթան 1-ին փողոց, թիվ 21:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 193

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 06-013-0016-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0. 24322 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԱԿԻ ՏՆԱԿԸ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 35-րդ հոդվածի 24 կետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի՝ համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» կողմից կազմված տեղագրական հատակագծի,06-013-0016-0001 ծածկագրից առանձնացված 0, 24322 հա հողամասում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող 10, 75 քմ արտաքին մակերեսով պահակի տնակը և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գյուլագարակ համայնքի սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառուցված պահակի տնակը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտներին օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » ՀՈՒՆԻՍ 2019 թվականի N 194

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0107-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՄԻՔԱՅԵԼ, ԳՈՌ, ՅՈՒՐԻԿ ՖՐԱՆԳՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԹԱՄԱՐԱ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մեքայել Ֆրանգյանի կողմից ներկայացված դիմումը, 20.03.2000թ. թիվ 02210010 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, <<Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակադիծը, ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածներով, 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով որոշում եմ.

1.Քանի որ ՀՀ լոռու մարզի համայնք Գյուլագարակ, գ. Վարդաբլուր 06-104-0107-0017 ծածկագրի վարելահողը համաձայն վերջին նկարահանված կադաստրային քարտեզի և <<Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի>> ԱՁ –ի կողմից կազմված հատակագծի հողամասի մակերեսը կազմում է ոչ թե 2.14 հա, այլ 2.5391հա, ուստի ճշտել վերը նշված ծածկագրի տակ գտնվող վարելահողի սահմանային չափերը համաձայն ,,Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի,, ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի կողմից հաստատված տեղագրական հատակագծի սահմանները 2.5391 հա մակերեսով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ գ. Գյուլագարակ
Հեռախոս 093996399 . էլեկտրոնային փոստ gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2019 թվականի N 195

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԳԱՌՆԻԿ ՄԻՇԱՅԻ ՔԱԼԱՇՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /06-027-0061 -0004/ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՈՒՆ-ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2387-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 22 - րդ կետով, որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի տարածքում գտնվող և սեփականության իրավունքով ներկայումս հանգուցյալ Գառնիկ Միշայի Քալաշյանի ընտանիքին պատկանող 06-027- 0061 -0004 ծածկագրով տուն-տնամերձին տրամադրել 4-րդ փողոց տուն 9 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թ. հունիսի 24
գ. Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 24» Հունիս 2019 թվականի N **196**

Համայնքի ղեկավարի որոշում

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0105-0026 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՄԻՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վռամ Գյուլզադյանի դիմումը, <<Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի >> ԱՁ- ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, 06.05.2019 թ.-ի ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ1/0137/02/19 վճիռը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0105-0026 տակ գտնվող 0.9494 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0105-0026 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը 0.9494 հա

բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի :

2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0.9494 հա մակերեսով վարելահողը սեփականության իրավունքով վերահատկացնել Վռամ Խորենի Գյուլզադյանին :

Համայնքի ղեկավար՝ Մ.Գևորգյան